# ՔԱՂԱՔՆԵՐ և ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐ. **ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ՍԵՌԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԴԱՇՆԱԳԻՐ**

one in five
un sur cinq

Կոնգրեսի ավանդը
Եվրոպայի խորհրդի
**ՀԻՆԳԻՑ ՄԵԿԸ**
քարոզարշավին

The Congress
Le Congrès

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

# Քաղաքներ և տարածաշրջաններ. երեխաների հանդեպ սեռական բռնության դադարեցման դաշնագիր

Կոնգրեսի ավանդը Եվրոպայի խորհրդի **ՀԻՆԳԻՑ ՄԵԿԸ** քարոզարշավին

հավանության է արժանացել Կոնգրեսի վարչության կողմից 2012թ սեպտեմբերի 14-ին

Ձևավորումը՝ Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրես
Հրատարակումը՝ 2013թ փետրվար
Armenian

# Բովանդակություն

**Դաշնագրի ներկայացում _____ 6**

Ինչի՞ մասին է այս ամենը _____ 6

Ինչու՞ է պետք ներգրավել տեղական և տարածաշրջանային իշխանություններին _____ 7

**Ի՞նչ է առաջարկում Կոնգրեսը _____ 8**

Ի՞նչ է ցանկանում Եվրոպայի խորհրդի կոնգրեսը, որ կատարեն տեղական և տարածաշրջանային իշխանությունները _____ 9

Ի՞նչ է իրենից ներկայացնում Երեխաների հանդեպ սեռական բռնության դադարեցման քաղաքների և տարածաշրջանների կոնգրեսի դաշնագիրը _____ 11

Ի՞նչ է իր մեջ ներառում Դաշնագրի մասնակից դառնալը _____ 12

Ովքե՞ր են հիմնական գործընկերները _____ 12

Ի՞նչ են իրենցից ներկայացնում չորս «Գ-ներ»-ը _____ 13

Չորս «Գ-ներ»-ը. Կանխարգելում _____ 14

Չորս «Գ-ներ».Պաշտպանություն _____ 24

Չորս «Գ-ներ». Դատական հետապնդում _____ 27

Չորս «Գ-ներ». Մասնակցություն _____ 28

**Ի՞նչ կոնկրետ գործողություններ կարող են իրականացվել տարածաշրջանային մակարդակում _____ 29**

**Ինչպե՞ս պետք է աշխատի Դաշնագիրը գործնականում 30**

Առցանց գրանցման «հենահարթակ» Դաշնագրին միանալու համար _____ 30

**Տեղական և տարածաշրջանային իշխանությունների գործողությունների ստուգիչ ցուցակ _______________ 32**

Կանխարգելում _______________________________ 32

**Փաստաթղթեր և տեղեկատվական կայքեր _________ 35**

# Դաշնագրի ներկայացում

## Ինչի՞ մասին է այս ամենը

Առկա տվյալները վկայում են, որ Եվրոպայում հինգ երեխայից մեկը դառնում է որևէ ձևով կատարվող սեռական բռնության զոհ՝ երեխաների հանդեպ կատարվող բռնության վատագույն ձևերից մեկը: Սեռական բռնությունը կարող է դրսևորվել շատ ձևերով՝ ներառյալ արյունապղծությունը, պոռնոգրաֆիան, մարմնավաճառությունը, մարդկանց թրաֆիքինգը, կոռուպցիան, սեռական հարաբերությունների առաջարկությունը համացանցի միջոցով, սեռական շահագործումը և սեռական բռնությունը: Այս բոլորը կարող են և իսկապես էլ լուրջ վնասներ են հասցնում երեխաների մտավոր և ֆիզիկական առողջությանը: Սեռական բռնության հետևանքները հետապնդում են երեխաներին իրենց չափահաս կյանքում՝ կյանք, որը նրանց գնահատմամբ հաճախ բնութագրվում է որպես թաքցված վշտի ու ցավի մեջ ապրած կյանք:

2010թ Եվրոպայի խորհուրդը մեկնարկեց մի քարոզարշավ անդրադառնալու համար երեխաների հանդեպ սեռական բռնության խնդրի լուծմանը: Այս քարոզարշավը, որը կրում է ՀԻՆԳԻՑ ՄԵԿԸ խորագիրը արտացոլելու համար խնդրի ծավալները, նպատակաուղղված է Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (այսուհետ՝ «Լանզարոտեի կոնվենցիա») հետագա ստորագրմանը, վավերացմանը և իրականացմանը և երեխաների, նրանց

ընտանիքների/խնամողների և ողջ հանրության վերազինմանը՝ երեխաներին սեռական բռնությունից պաշտպանելու և այն կանխելու համար տրվող գիտելիքների և միջոցների առումով, դրանով իսկ բարձրացնելով իրազեկվածության աստիճանը դրա ծավալների վերաբերյալ:

## Ինչու՞ է պետք ներգրավել տեղական և տարածաշրջանային իշխանություններին

Տեղական և տարածաշրջանային իշխանությունները պատասխանատվություն են կրում պաշտպանելու և աջակցելու իրենց տարածքներում ապրող երեխաների և երիտասարդների անվտանգության և բարեկեցության իրականացմանը՝ միասին աշխատելով այնպիսի գործընկերների հետ, ինչպիսին են երրորդ հատվածը, պետական կազմակերպությունները և մասնավոր հատվածը: Նրանք պետք է որդեգրեն քառակողմ ուղղվածություն ունեցող մոտեցում՝ կանխարգելում, պաշտպանություն, դատական հետապնդում և մասնակցություն՝ այսպես կոչված չորս «Գործառույթներ» (այսուհետ՝ «Գ-ներ»): Երեխաների հանդեպ սեռական բռնության և չարաշահման դեպքերի հետ գործ ունենալու ժամանակ եվրոպական քաղաքներին և տարածաշրջաններին նետված մարտահրավերն է բարձրացնել այս խնդրի նկատմամբ իրազեկվածության աստիճանը, զարգացնել և իրականացնել համայնքային մակարդակում գործողության պլաններ և ռազմավարություններ՝ կապված չորս «Գ-ներ»-ի հետ և ներդրումներ կատարել ավելի որակյալ ծառայություններ մատուցելու համար: Բոլոր ծառայությունները և գործողությունները պետք է

հարգեն երեխաների իրավունքները, առաջին տեղում դնեն երեխայի էական շահերը և հնարավորություն տան լսելի դարձնելու երեխաների ձայները, որպեսզի հնարավոր լինի տեղերում կատարել այն ինչ անհրաժեշտ է երեխաների և ընտանիքների սեռական բռնության և սեռական չարաշահման դադարեցման համար, ինչպես նաև ոճրագործներին հանձնեն արդարադատության ձեռքը:

## Ի՞նչ է առաջարկում Կոնգրեսը

Լուծելու համար ՀԻՆԳԻՑ ՄԵԿԸ քարոզարշավի տեղական և տարածաշրջանային խնդիրները, Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսն ընդունել է Գործողությունների ռազմավարական պլան հետևյալ որոշակի նպատակների համար.

1. կոնգրեսի անդամների, տեղական և տարածաշրջանային իշխանությունների, տեղական և տարածաշրջանային իշխանությունների միավորումների և այլ գործընկերների շրջանում բարձրացնել իրազեկվածության աստիճանը քարոզարշավի նպատակների վերաբերյալ,
2. խթանել Եվրոպայի խորհրդի իրավական չափորոշիչների և փաստաթղթերի կիրառումը (Լանզարոտեի կոնվենցիա և Երեխայի հանդեպ բարյացակամ արդարադատության ղեկավար սկզբունքներ) երեխաներին բոլոր ձևերի բռնությունից պաշտպանելու կառույցներ և մեխանիզմներ ստեղծելու ժամանակ,

3. խրախուսել տեղական և տարածաշրջանային իշխանություններին մեկնարկելու քարոզարշավներ, մշակել երեխաների հանդեպ սեռական բռնությունը կանխարգելող իրազեկվածության բարձրացման միջոցներ, մասնավորապես տարածել և ընդունել քարոզարշավի իրազեկության բարձրացման նյութեր (Ներքնազգեստի կանոնը)՝ օգնելու ծնողներին և խնամողներին խոսել իրենց երեխաների հետ սեռական բռնության մասին երեխայի նկատմամբ բարյացակամ ձևով,
4. խթանել բազմաշահագրգիռ կողմերի մոտեցումը և խրախուսել տեղական և տարածաշրջանային իշխանություններին ստեղծելու համակարգված բազմապրոֆիլ կառույցներ, գործընթացներ և մեխանիզմներ՝ ուղղված երեխաների հանդեպ սեռական բռնության հիմնախնդրի լուծմանը,
5. ստեղծել այնպիսի մի մշակութային մթնոլորտ, որտեղ քաղաքները և տարածաշրջաններն ավելի բարյացակամ մոտեցում կցուցաբերեն երեխաների նկատմամբ և երեխաներին ու երիտասարդներին հնարավորություն կտան ավելի նշանակալից մասնակցություն ունենալ սեռական բռնությունից զերծ, ապահով համայնքների ստեղծման գործում:

## Ի՞նչ է ցանկանում Եվրոպայի խորհրդի կոնգրեսը, որ կատարեն տեղական և տարածաշրջանային իշխանությունները

Տեղական մակարդակում կատարվող գործողությունները սահմանափակ բնույթի են, իրոք 2010թ Միացյալ Թագավորությունում անցկացրած

ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդ անդամ պետությունում տեղական իշխանությունների մեկ քառորդից պակասը միայն ունի երեխաներին սեռական շահագործումից պաշտպանելու ռազմավարություն[1]: Ամեն դեպքում, սակայն, առկա ուսումնասիրությունները և ապացույցները ցույց են տալիս, որ երեխայի նկատմամբ սեռական շահագործումներ **կատարվում են** ոչ միայն ՄԹ-ում, այլ նաև Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետություններից յուրաքանչյուրում, թեև տվյալների հավաքագրման մեթոդները միշտ չէ, որ բավականաչափ կատարելագործված են լինում այս փաստարկը հաստատելու համար:

Հետևաբար, Կոնգրեսի նպատակն է խթանել ՀԻՆԳԻՑ ՄԵԿԸ քարոզարշավը և տեղական և տարածաշրջանային իշխանությունների շրջանում բարձրացնել Լանզարոտեի կոնվենցիայի մասին իրազեկվածության աստիճանն այնքան, որպեսզի ստեղծվեն երեխայի հանդեպ բարյացակամ տեղական և տարածաշրջանային ծառայություններ՝ պաշտպանելու համար երեխաներին և աջակցելու սեռական բռնության կանխարգելմանը համայնքների շրջանակում:

Այսպիսով, Եվրոպայի խորհրդի կոնգրեսը բոլոր քաղաքներին և տարածաշրջաններին հորդորում է միանալ ՀԻՆԳԻՑ ՄԵԿԸ քարոզարշավին՝ ստորագրելով **Երեխաների հանդեպ սեռական բռնության դադարեցման քաղաքների և տարածաշրջանների կոնգրեսի դաշնագիրը**:

---

[1] What's going on to safeguard children and young people from sexual exploitation? Jago et al, October 2011.

## Ի՞նչ է իրենից ներկայացնում Երեխաների հանդեպ սեռական բռնության դադարեցման քաղաքների և տարածաշրջանների կոնգրեսի դաշնագիրը

Ցանկալի է և իրոք անհրաժեշտ գործունեություն ծավալել վերը նկարագրված բոլոր չորս «Գ-ներ»-ի տիրույթներում: Կոնգրեսը կազմել է հնարավոր գործողությունների մի ցուցակ՝ սկսելով այնպիսիներից, որոնք պահանջում են շատ քիչ, եթե ընդհանրապես որևէ պետական ծախսեր և անցնելով մյուսներին, որոնց համար անհրաժեշտ կլինեն արդեն էական ներդրումներ՝ հատուկ ռազմավարություններ սահմանելու և համապատասխան կառույցներ ստեղծելու անհրաժեշտության պատճառով: Որքան էլ որ դա արժենա, երեխայի նկատմամբ սեռական բռնության և սեռական չարաշահման դադարեցմանը միտված միջոցառումները միշտ էլ կլինեն արդարացված, քանի որ դրանք ներդրումներ են առողջ համայնք ունենալու նպատակով՝ հիմնված մարդու իրավունքների հանդեպ հարգանքի վրա:

Թեև Կոնգրեսի հիմնական նպատակն է, որպեսզի որքան հնարավոր է շատ տեղական և տարածաշրջանային խորհուրդներ և խորհրդարաններ ստեղծեն համակարգված բազմապրոֆիլ կառույցներ, գործընթացներ և մեխանիզմներ՝ դիմակայելու համար երեխաների հանդեպ սեռական բռնությանը և սեռական չարաշահումին, սկզբում քաղաքները և տարածաշրջանները կարող են քայլ առ քայլ իրենց ավանդը բերել ՀԻՆԳԻՑ ՄԵԿԸ քարոզարշավին՝

բարձրացնելով, օրինակ՝ քարոզարշավի մասին իրազեկվածության աստիճանը իրենց սկզբնական ցանցաէջերից հղում անելու միջոցով:

Կոնգրեսը բոլոր 47 անդամ պետությունների տեղական և տարածաշրջանային իշխանություններին հորդորում է միանալ Դաշնագրին և սկսել գործընթացը՝ իրականացնելով մեր ստուգիչ ցուցակում թվարկված գործողություններից առնվազն մեկը և շարունակել պայքարը երեխաների հանդեպ սեռական բռնության և չարաշահման դեմ՝ որպես իրենց հիմնական նպատակ որդեգրելով համակարգված բազմապրոֆիլ կառույցների, գործընթացների և մեխանիզմների ստեղծումը:

## Ի՞նչ է իր մեջ ներառում Դաշնագրի մասնակից դառնալը

Մասնակից քաղաքներն ու տարածաշրջանները կմիանան Կոնգրեսի իրազեկվածության բարձրացման և կառույցների ստեղծման նպատակին, որն անհրաժեշտ է պայքարելու համար երեխաների նկատմամբ սեռական բռնության և չարաշահման հիմնախնդրի դեմ՝ իրականացնելով որքան հնարավոր է շատ գործողություններ այս գրքույկում թվարկվածներից կամ էլ այլ գործողություններ, որոնք իրապես կօգնեն Կոնգրեսին հասնելու իր նպատակներին:

## Ովքե՞ր են հիմնական գործընկերները

Եվրոպայի խորհուրդը 47 անդամ պետություններում ստեղծել է կառավարությունների կողմից հաստատված

կենտրոնների մի ցանց, որը կարող է խորհրդատվություն տալ և օգնել տեղական իշխանություններին միավորելու ուժերը բազմաթիվ ՈԿԿ-ների և քաղաքացիական հասարակության խմբերի հետ, որոնք արդեն իսկ ակտիվորեն ներգրավված են այդ քարոզարշավին: Անդամ պետություններից մի քանիսում ստեղծվել են Քարոզարշավի ազգային թիմեր, որոնք համակարգում և իրականացնում են քարոզարշավի աշխատանքները և կարող են ուղղորդել դրանք տարածաշրջանային և մունիցիպալ մակարդակներում: Տեղական համայնքները և տարածաշրջանները կարող են նաև կապ հաստատել համապատասխան ազգային նախարարությունների հետ:

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը ստեղծել է Իրար հետ շփվող խորհրդարանականների ցանց՝ համակարգելու համար ազգային, եվրոպական և միջազգային խորհրդարանական գործողությունները երեխաների հանդեպ սեռական բռնության դեմ պայքարելու համար: Այդ Ցանցը, որը ներկայումս ունի 49 անդամ, նպաստում է յուրաքանչյուր անդամ պետությունում իրականացվող օրենսդրական և քաղաքական գործունեության լավագույն փորձի փոխանակմանը:

## Ի՞նչ են իրենցից ներկայացնում չորս «Գ-ներ»-ը

Տեղական և տարածաշրջանային իշխանությունների հիմնական նպատակը պետք է լինի երեխաների շահագործման կանխարգելումը: Դրա համար նրանք պետք է որոշեն, թե ինչպես լավագույնս գործադրեն պետական հատվածի գործակալությունները

ապահովելու համար, որպեսզի երեխաները և երիտասարդները լինեն պաշտպանված և ստանան աջակցություն՝ միաժամանակ ակտիվորեն հետամուտ լինելով ոճրագործներին դատական հետապնդման ենթարկելու գործընթացներին: Տեղական և տարածաշրջանային իշխանությունները պետք է որդեգրեն քառակողմ ուղղվածություն ունեցող մոտեցում՝ կանխարգելում, պաշտպանություն, դատական հետապնդում և մասնակցություն՝ չորս «Գ-ներ», կանխարգելելու բռնությունը, պաշտպանելու զոհերին, դատական կարգով հետապնդելու ոճրագործներին և ապահովելու երեխաների լիարժեք մասնակցությունը ողջ գործընթացում:

Այս հատվածում դուք կգտնեք տեղեկատվություն այն մասին, թե ինչ տեսակի գործողություն է պետք ձեռնարկել և ինչու է այն անհրաժեշտ:

## Չորս «Գ-ներ»-ը. Կանխարգելում

Գոյություն ունեն մի շարք կանխարգելիչ գործողություններ, որոնք կարող են իրականացվել տեղական և տարածաշրջանային մակարդակներում՝ աջակցելու համար երեխաների նկատմամբ սեռական շահագործման և բռնության կանխարգելմանը:

### *Իրազեկվածության բարձրացում*

Տեղական և տարածաշրջանային իշխանությունները պետք է մշակեն երեխայի սեռական չարաշահումը և բռնությունը կանխարգելող ծրագրեր և քաղաքականություն՝ բարձրացնելու համար երեխաների, երեխաների հետ աշխատող անձանց,

ծնողների, ընտանիքների, խնամողների և հասարակության լայն շերտերի իրազեկվածության աստիճանը: Իրազեկվածության բարձրացումը կարող է առաջացնել այնպիսի սոցիալական փոփոխություն, որը կաջակցի կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը:

Կանխարգելիչ ծրագրերն ու ռազմավարությունները պետք է ապահովեն, որպեսզի բոլոր շահառուները ստանան համարժեք, բարձրորակ մասնագիտական

**<u>Առաջարկություններ գործողությունների համար</u>**

- Տեղադրել հղում Եվրոպայի խորհրդի ՀԻՆԳԻՑ ՄԵԿԸ վեբկայքին՝ քաղաքների և տարածաշրջանների սկզբնական ցանցաէջերում
- Կազմակերպել տեղեկատվական դասընթացներ դպրոցներում և երիտասարդական կենտրոններում երեխաների և անձնակազմի համար
- Տարածել տեղեկատվություն և ղեկավար սկզբունքներ պարունակող տեղեկագրեր և թռուցիկներ
- Ապահովել վերապատրաստում տեղական և տարածաշրջանային մասնագետների համար
- Կազմակերպել քննարկումներ և սեմինարներ մասնագետների և հանրության համար
- Օգտագործել Եվրոպական տեղական ժողովրդավարության շաբաթը լուսաբանելու համար խնդիրը
- Համագործակցել ՈԿԿ-ների, լրատվամիջոցների և մասնավոր հատվածի հետ

ուսուցում՝ երաշխավորելու համար արդյունավետ և ապահով ծառայությունների տրամադրումը: Շահառուները ներառում են բոլոր այն անձանց, ովքեր

կանոնավոր շփումներ ունեն երեխաների հետ, օրինակ՝ սոցիալական ծառայողները, առողջապահության ոլորտի մասնագետները, ուսուցիչները (բոլոր մակարդակների՝ նախակրթարանից մինչև միջնակարգ դպրոց), ոստիկանները, մշակութային, ժամանցային և մարզական համալիրների, երիտասարդական կենտրոնների, իրավապահ մարմինների աշխատակիցները, եկեղեցիների սպասավորները և այլն:

Քանի որ ռիսկային խմբի երեխաների վաղ հայտնաբերումը պետք է լինի ցանկացած ռազմավարության մաս, պետք է ձեռք բերվեն երեխաների սեռական շահագործման և սեռական բռնության մասին համարժեք գիտելիքներ և բարձր իրազեկվածության աստիճան այն մասին, թե ինչպես որոշել այն նշանները, որոնք կարող են ցույց տալ սեռական բռնությունը, ինչպես օրինակ՝ փոփոխությունները վարքում:

Ծնողները, ընտանիքները և խնամողները պետք է նաև իմանան, թե ինչպես է պետք ճանաչել երեխայի սեռական շահագործման և բռնության ենթարկվելու տարբերանշանները, ինչ գործողություններ պետք է ձեռնարկել և թե ինչպեսի հետևանքներ դա կարող է ունենալ երեխաների և ընտանիքների համար:

Պետք է կատարվի նաև կանխարգելիչ միջոցառումների ուսուցում, օրինակ՝ թե ինչպես մոնիտորինգի ենթարկել

**<u>Առաջարկություններ գործողությունների համար</u>**

- Ապահովել, որպեսզի երեխաների համար նախատեսված ազգային և եվրոպական օգնության թեժ գծերի համարները լինեն մշտապես հասանելի
- Քաղաքի կամ տարածաշրջանի ցանցաէջի վրա ստեղծել հնարավորություն մեկ կտտոցով հղում կատարել շտապ խորհրդատվություն և օգնություն ստանալու համար
- Մշակել և տարածել փոքր, կրելու համար հարմար հիշողության քարտեր, որոնք կպարունակեն բոլոր դպրոցականների համար օգտակար հեռախոսահամարներ և հասցեներ
- Արտադրել սառնարանին ամրացվող մագնիսե փոքրիկ ցուցանակներ, որոնք կպարունակեն օգտակար հեռախոսահամարներ և հասցեներ յուրաքանչյուր ընտանիքի համար
- Երեխաների կողմից հաճախ այցելվող տարածքներում ցուցադրել պաստառներ, որոնք կպարունակեն տեղեկատվություն այն մասին, թե ուր գնալ օգնություն ստանալու համար
- Տարածել դպրոցներում և երիտասարդական ակումբներում երեխայի նկատմամբ բարյացակամ ուսումնական նյութեր
- Տարածել տեղեկագրեր և թռուցիկներ համացանցում անվտանգ պահվածք դրսևորելու մասին
- Ավելի դյուրին դարձնել առցանց կատարվող անօրինական գործողությունների մասին տեղեկացնելը

առցանց տեղեկատվությունը և ինչպես երեխաներին օգնել պաշտպանվել, օրինակ՝ տարբերելով վնասակար բովանդակություն ունեցող նյութերը համացանցում կամ անհարկի շփումներն անծանոթ անձանց հետ, ովքեր կարող են խնդրել նրանց տալ իրենց անձնական տեղեկությունները նրանց օգնելու պատրվակով (իբրև

հոգածություն): Այս ուսուցումը պետք է տարածվի նաև ծնողների վրա, որոնց պետք է սովորեցնել, թե ինչպես է պետք մոնիտորինգի ենթարկել և վերահսկել երեխաների մուտքը համացանց, ինչպես նաև երեխաների, որոնց պետք է տեղեկացնել համացանցում առկա ռիսկերի և վտանգների մասին: Երեխաների, ծնողների, ուսուցիչների, ընտանիքների համար առցանց համացանցից անվտանգ օգտվելու միջոցները կարող են մշակվել՝ համագործակցելով ՈԿԿ-ների կամ այլ կազմակերպությունների հետ, կամ օգտագործվեն գոյություն ունեցող իրազեկվածության բարձրացման միջոցները:

Իրազեկվածության բարձրացման գործողությունները պետք է նաև որպես թիրախ ընտրեն հանրության լայն շերտերին, որոնք պետք է տեղեկատվություն ստանան այդ երևույթի մասին և այն կանխարգելիչ միջոցառումների մասին, որոնք կարող են ձեռնարկվել: Քաղաքների և տարածաշրջանների սկզբնական ցանցաէջից Եվրոպայի խորհրդի ՀԻՆԳԻՑ ՄԵԿԸ վերկայքին արված հղումը այդ նպատակին հասնելու ուղիներից մեկն է: Կարելի է նաև տեղական մակարդակում տեղեկատվություն տարածել ազգային և եվրոպական թեժ և օգնության գծերի մասին:

*Իրազեկվածության բարձրացման և ուսումնական նյութեր*

Եվրոպայի խորհուրդը նյութեր է մշակել երեխաների նկատմամբ սեռական բռնության և չարաշահման խնդրի ավելի խորը ըմբռնման և քարոզարշավի առաջ քաշած հիմնահարցերին աջակցելու համար: Նյութերը մշակվել են օգտագործման համար որոշումներ կայացնողների, քարոզչական խմբերի և երեխաների համար և երեխաների հետ աշխատող մասնագետների կողմից: Հատուկ իրազեկվածությունը բարձրացնող ուսումնական նյութ՝ թարգմանված եվրոպական 36 լեզուներով, մշակվել է ընդլայնելու համար ծնողների և երեխաների հնարավորությունները սեռական բռնությունը կանխարգելելու և դրանց մասին հաղորդելու համար (www.underwearrule.org): Տեղական և տարածաշրջանային իշխանությունները պետք է տպագրեն և լայնորեն տարածեն ՀԻՆԳԻՑ ՄԵԿԸ քարոզարշավի նյութերը դպրոցներում, մանկապարտեզներում և երեխաների կողմից այցելվող այլ հաստատություններում (երիտասարդական ակումբներում, երիտասարդական միություններում, ինչպես օրինակ՝ գայդերի (աղջիկ-սկաուտներ), սկաուտների և այլն) (Կոնտակտ՝ 1in5@coe.int):

*Երեխաների դաստիարակությունը*

Տեղեկանալով սեռական չարաշահման և բռնության մասին՝ ներառյալ բռնության տարբեր տեսակները և ռիսկային իրավիճակները, երեխաներն ավելացնում են իրենց գիտելիքները և հմտությունները՝ կատարելու հիմնավորված, անվտանգ և առողջ ընտրություն խուսափելու համար սեռական շահագործման և բռնության ենթարկվելու ռիսկից և դրանով իսկ ի վիճակի

են լինում կառուցելու առողջ ու դրական փոխհարաբերություններ:

Արդյունավետ, տարիքին համապատասխան և երեխայի նկատմամբ բարյացակամ լեզվով կազմված ուսումնական նյութերը՝ հարմարեցված երեխաների հատուկ կարիքներին ու զգայությանը և ներառող մշակութապես զգայուն տեղեկատվությունը պետք է կիրառվեն ինչպես տարրական, այնպես էլ միջնակարգ դպրոցներում: Այդպիսով, երեխաները գաղափար են կազմում, թե ինչ է սեռական բռնությունը ու թե ինչպես ճանաչել այն, ինչն էլ սատարում է կանխարգելմանն անվտանգ պահվածքի խթանման միջոցով: Պետք է այդ նյութերում ներառվեն տեղեկություններ նոր կոմունիկացիոն տեխնոլոգիաների և համացանցում առցանց վարքագծի պարունակած ռիսկերի մասին ու թե ինչպես է պետք տեղեկացնել համացանցում առկա անօրինական բովանդակության մասին:

Ցանկացած ուսումնական և տեղեկատվական քարոզարշավ պետք է ներառի խորհրդատվության և աջակցության աղբյուրները ցույց տվող նշանը, օրինակ՝ հատուկ հեռախոսագծերը կամ թեժ գծերը, մասնավորապես ազգային և եվրոպական համարները, որոնք գործում են նաև սովորական աշխատանքային ժամերից դուրս, որպեսզի երեխաներն իմանան, թե ում դիմեն: Փոքր, կրելու համար հարմար հիշողության քարտեր, բանալիների համար օղակներ կամ բջջային հեռախոսի ծածկոցներ, որոնք պարունակում են օգտակար համարներ և հասցեներ, կարող են բաժանվել բոլոր դպրոցականներին՝ ձեռքի տակ ունենալու համար

իրենց պայուսակներում: Տեղական և տարածաշրջանային իշխանությունները կարող են արտադրել սառնարանին ամրացվող մագնիսե փոքր ցուցանակներ այս տեղեկություններով՝ ապահովելու համար, որպեսզի այս տեղեկությունները ազատորեն հասանելի լինեն յուրաքանչյուր երեխայի համար յուրաքանչյուր ընտանիքում: Տեղական և տարածաշրջանային իշխանությունները պետք է ապահովեն, որպեսզի տեղեկատվությունը և օգնությունը դյուրին լինի ստանալ և հստակ տեսանելի, մեկ կտտոցով քաղաքների/տարածաշրջանների կայքից երեխաներին հնարավոր լինի հեշտությամբ օգնություն և խորհրդատվություն ստանալ: Տեղեկատվություն այն մասին, թե ուր գնալ և ում դիմել, պետք է ցուցադրված լինի երեխաների կողմից հաճախ այցելվող բոլոր վայրերում՝ դպրոցներում, խաղահրապարակներում, երիտասարդական կենտրոններում, առողջապահական կենտրոններում, հանրային գրադարաններում, դժբախտ պատահարների և արտակարգ իրավիճակների ծառայություններում, սեռական առողջության կլինիկաներում, տեղական իշխանության կայքերում, եկեղեցիներում և այլն:

*Գործընկերներ կանխարգելիչ գործողությունների ժամանակ*

Լանզարոտեի կոնվենցիան իշխանություններին խրախուսում է ստեղծել անկախ հաստատություններ երեխաների իրավունքների աջակցության և պաշտպանության համար: Այն նաև առաջարկում է նշանակել մեկ անձ կամ մարմին՝ բարձրացնելու համար հանրության իրազեկվածությունը երեխայի սեռական շահագործման և բռնության մասին, ինչպես օրինակ՝

Երեխաների օմբուդսմեն, Երեխաների փաստաբան կամ Երեխաների իրավունքների հանձնակատար:

<u>Առաջարկություններ գործողությունների համար</u>

- Տեղական/տարածաշրջանային մակարդակում նշանակել մի անձ կամ մարմին՝ բարձրացնելու համար երեխաների սեռական բռնության և չարաշահման մասին իրազեկվածության աստիճանը
- Աշխատել քաղաքացիական հասարակության հետ՝ հավաքելու համար տեղեկատվություն տեղերում առկա կոնկրետ իրավիճակների մասին տեղեկացնելու համար վարվող քաղաքականության և ձեռնարկվող գործողությունների վերաբերյալ
- Համագործակցել լրատվամիջոցների հետ
- Համագործակցել նաև քաղաքի սահմաններից դուրս

Նման պաշտոններ կարող են ստեղծվել տեղական և/կամ տարածաշրջանային մակարդակում:

Շատ կազմակերպություններ և միավորումներ միջազգային, եվրոպական, ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում շատ ակտիվ պայքար են մղում երեխաների սեռական բռնության և չարաշահման դեմ: Նրանցից շատերը հրապարակել են իրազեկվածության բարձրացման և տեղեկատվական փաստաթղթեր և նյութեր, որոնք կարող են լայնորեն տարածվել: Տեղական և տարածաշրջանային իշխանությունների ազգային միավորումները և հենց այդ իշխանություններն իրենք պետք է աշխատեն այս կազմակերպությունների հետ՝ ապահովելու համար նշված նյութերի լայնորեն կիրառումը:

Երեխայի սեռական շահագործումը և բռնությունը հայտնի է որպես գաղտնի հանցագործություն, քանի որ տուժած երեխաները սովորաբար մեծ դժվարությամբ են այդ մասին արտահայտվում: Դա և միօրինականացված և համադրելի մեթոդների բացակայությունը տվյալների հավաքագրման գործում նշանակում են, որ դժվար է հստակ պատկերացում կազմել հիմնախնդրի ծավալների մասին: Շատ կարևոր է, որպեսզի տեղական և/կամ տարածաշրջանային իշխանությունները ստեղծեն մեխանիզմներ տվյալների հավաքագրման համար իրենց տարածքում տիրող իրավիճակի դիտարկման և գնահատման նպատակով: Շնորհիվ տվյալների հավաքագրման իշխանությունները կարող են իրենց տարածքներում գնահատել երեխայի սեռական շահագործման ռիսկերը, ծավալները և բնույթը և տեղեկացված կերպով արձագանքել հիմնախնդրին:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կարող են տեղական և տարածաշրջանային իշխանությունների հետ համատեղ աշխատել այն նախագծերի և ծրագրերի վրա, որոնք նպատակաուղղված են կանխարգելելու և պաշտպանելու երեխաներին, ինչպես որ դա կարող են անել նաև մասնավոր հատվածը, և մասնավորապես տեղեկատվական և կոմունիկացիոն տեխնոլոգիաների հատվածը և լրատվամիջոցները: Համագործակցությունը տարածաշրջանային մակարդակում կարող է արդյունավետ լինել այն հանցագործների վնասազերծման համար, ովքեր հատում են քաղաքի սահմանները, օրինակ՝ երեխայի թրաֆիքինգի հետ կապված գործերում:

## Չորս «Գ-ներ».Պաշտպանություն

Որպես երեխայի նկատմամբ սեռական շահագործման և բռնության զոհերին ամենամոտը գտնվող կառավարման մակարդակ՝ տեղական և տարածաշրջանային իշխանություններն ամենաբարենպաստ պայմաններում են գտնվում ստեղծելու համար կառույցներ, որոնք կներգրավեն բոլոր մասնակիցներին խնամքի ցուցաբերման շղթայում և կապահովեն, որպեսզի հնարավոր լավագույն աջակցությունն ու օժանդակությունը տարածվի երեխաների վրա: Նրանք պարտավոր են նաև ծառայելու ոչ միայն տուժած երեխայի կարիքներին, այլև ընտանեկան համակարգին և ողջ համայնքին: Տեղական և տարածաշրջանային իշխանությունները պետք է աջակցեն բազմաշահառու մոտեցմանը և ստեղծեն համակարգված բազմապրոֆիլ կառույցներ, գործընթացներ և մեխանիզմներ լուծելու համար երեխաների հանդեպ սեռական բռնության խնդիրը:

### *Բազմապրոֆիլ կենտրոններ*

Քաղաքները և տարածաշրջանները պետք է որդեգրեն մի առավել ամբողջական, միասնական մոտեցում՝ հիմնված բազմաթիվ գործակալություններ ընդգրկող ռազմավարության վրա և ստեղծեն մասնագիտացված, հատուկ մարմիններ՝ հստակ սահմանված դերակատարումներով ու պարտականություններով, որոնք կհամախմբեն երեխաներին պաշտպանող և նրանց բարեկեցությունը և ապահովությունը բարելավող բոլոր տեղական ծառայությունները:

Պաշտպանության տեղական ռազմավարությունները պետք է մշակվեն՝ ներառելով տեղական յուրահատուկ ընթացակարգերը և համակարգերը:

Եվրոպական երկրների մեծ մասում երեխայի սեռական բռնության հետ կապված գործերով զբաղվելու պատասխանատվությունն ընկած է լինում բազմաթիվ տարբեր գործակալությունների վրա, որոնք բոլորն էլ պետք է ուսումնասիրեն այդ գործերը: Երեխաները ենթարկվում են կրկնվող հարցազրույցների, ինչի արդյունքում երեխան նորից զոհ է զգում իրեն, ինչը կարող է անգամ ավելի վնասակար լինել, քան բռնությունն ինքը: Լանզարոտեի կոնվենցիան խթանում է բազմաթիվ գործակալություններ ընդգրկող, բազմապրոֆիլ «մեկ կանգառի» կենտրոնների ստեղծումը, որտեղ երեխայի բռնության գործերի հետաքննության մեջ ներգրավված բոլոր մասնագետները՝ երեխայի սոցիալական ապահովության և առողջապահական ծառայությունները, իրավապահ

<u>Առաջարկություններ գործողությունների համար</u>

- Ստեղծել երեխայի նկատմամբ բարյացակամ բազմաթիվ գործակալություններ ընդգրկող, բազմապրոֆիլ տներ
- Հաշվետվություն տալու պարտավորություն սահմանել տեղական/տարածաշրջանային մակարդակներում
- Լայնորեն տարածել տեղեկատվություն ազգային և եվրոպական հեռախոսահամարների կամ առցանց թեժ գծերի վերաբերյալ
- Սահմանել երեխաների հետ աշխատող բոլոր մասնագետների համար հստակ ղեկավար սկզբունքներ՝ հաշվետվություններ ներկայացնելու համար

մարմինները, դատական իշխանությունները և այլն, կաշխատեն մի տանիքի տակ՝ ապահովելու համար, որպեսզի սեռական բռնության զոհ դարձած երեխաները չենթարկվեն հետագա չարաշահումների (Երեխայի նկատմամբ բարյացակամ տների հայեցակարգը): Կարևոր է, որպեսզի երեխաները տեղ ունենան գնալու, որտեղ նրանք կկարողանան վստահորեն արտահայտվել, ազատ և անկաշկանդ և որտեղ նրանք իրենց ապահով կզգան: Նման կենտրոնները թույլ են տալիս դա անել՝ երեխաների հետ կարելի է զրուցել և բժշկական զննության ենթարկել դատաբժշկական նպատակներով, համակողմանի գնահատել և տրամադրել բուժական բոլոր համապատասխան ծառայությունները որակյալ մասնագետների կողմից՝ միաժամանակ խուսափելով կրկնվող հարցազրույցներից և բռնության վերապրումից:

Ավելի շատ երեխաներ կարող էին պաշտպանված լինել, եթե կասկածների մասին հայտնելու պարտավորությունը պարտադիր լիներ՝ առանց խախտելու գոյություն ունեցող գաղտնիության կանոնները կամ երեխայի վստահությունը: Հստակ ղեկավար սկզբունքներ պետք է տրվեն երեխաների հետ աշխատող բոլոր մասնագետներին՝ իրենց մտահոգությունների մասին համապատասխան գործակալություն դիմելու վերաբերյալ, ինչից հետո տեղական և տարածաշրջանային իշխանությունները պետք է հարցումներ կատարեն՝ պարզելու համար, թե կա արդյոք ողջամիտ պատճառ բռնություն կասկածելու համար: Շահառուներին նույնպես պետք է տեղյակ պահել երեխաների պաշտպանության և իրավունքների

մասին, ինչպես և երեխայի էական շահերն առաջնային համարելու կարևորության մասին:

Այնտեղ, որտեղ ազգային մակարդակում չկան հեռախոսահամարներ կամ առցանց թեժ գծեր, պետք է ստեղծել դրանք՝ ապահովելով երեխաներին հեշտությամբ մուտք գործել այնտեղ և անանուն խորհրդատվություն ստանալ:

***Գործընկերներ պաշտպանության միջոցառումների ժամանակ***

ՈԿԿ-ները և քաղաքացիական հասարակության այլ կազմակերպությունները կարևոր գործընկերներ են հանդիսանում՝ հատկապես նրանք, որոնք օգնություն են ցուցաբերում տուժածներին:

## Չորս «Գ-ներ». Դատական հետապնդում

Լանզարոտեի կոնվենցիան քրեականացնում է մի շարք գործողություններ ու թեև հանցագործների հետաքննության ու դատական հետապնդման ընթացակարգերը հիմնականում պետք է սահմանվեն ազգային քրեական օրենսդրությամբ, տեղական և տարածաշրջանային իշխանությունները նույնպես դերակատարում ունեն այս բնագավառում: Այս փուլի բոլոր գործողություններում, ներառյալ հետաքննությունն ու դատական վարույթները, երեխայի էական շահերը, իրավունքները և խոցելիության հարցերը պետք է լինեն մտահոգության գլխավոր առարկան:

*Աջակցություն տուժածներին*
Իշխանությունները, համատեղ գործակցելով նաև ՈԿԿ-ների հետ, պետք է ապահովեն, որպեսզի իրականացվեն որոշակի միջոցառումներ, ինչպես օրինակ՝ անվճար օգնության տրամադրումը դատավարության ընթացքում, խորհրդատվությունը ծնողներին և եղբայրներին ու քույրերին և բուժական օժանդակությունը:

*Աշխատանք օրինախախտների հետ*
Տեղական և տարածաշրջանային իշխանությունները կարող են ապահովել, որպեսզի տրամադրվեն աջակցության համապատասխան ծառայություններ, մասնավորապես օրինախախտումների կրկնողությունից խուսափելու համար: Նրանք կարող են նաև ապահովել, որպեսզի հանցագործները տեղեկատվություն ստանան իրենց հասանելի ծառայությունների և իրավունքների մասին:

## Չորս «Գ-ներ». Մասնակցություն

Եվրոպայի խորհուրդը համարում է, որ լսված լինելու և լրջորեն ընկալվելու իրավունքը հիմնարար նշանակություն ունի յուրաքանչյուր երեխայի և երիտասարդի մարդկային արժանապատվության և առողջ զարգացման համար: Երեխաներին և երիտասարդներին լսելը և իրենց տարիքին ու հասունությանը համապատասխան արտահայտած կարծիքներին համարժեք նշանակություն տալն անհրաժեշտ է արդյունավետորեն իրականացնելու համար նրանց իրավունքը՝ առաջնային կարևորություն տալ նրանց էական շահերի պաշտպանությանը բոլոր իրենց վերաբերող հարցերում և պաշտպանված լինել

բռնությունից, չարաշահումից, անտեսված լինելուց և վատ վերաբերմունքից[2]: Տեղական և տարածաշրջանային իշխանությունների բոլոր գործողությունները պետք է ղեկավարվեն այս սկզբունքով:

## Ի՞նչ կոնկրետ գործողություններ կարող են իրականացվել տարածաշրջանային մակարդակում

Այն դեպքում, երբ համաձայն Լանզարոտեի կոնվենցիայի փաստարկված շատ միջոցառումներ դեռ պետք է վերածել քրեական և քաղաքացիական օրենքների, մի բան, որի պատասխանատվությունը սովորաբար ընկած է պետության վրա, երեխայի պաշտպանության բնագավառում մի շարք վճռորոշ հարցեր կարող են անցնել տարածաշրջանների իրավասության ներքո, ինչպես օրինակ՝ սոցիալական ապահովության և առողջապահական ծառայությունների կարգավորումը և կազմակերպումը, ինչպես նաև երեխաներին սեռական շահագործումից և բռնությունից պաշտպանող և դրանք կանխարգելող հատուկ միջոցառումների որդեգրումն ու կառույցների ստեղծումը: Տարածաշրջանային իշխանությունները և խորհրդարանները պետք է ուսումնասիրեն, թե ինչպիսի միջոցառումներ, ինչպես օրենսդրական, այնպես էլ վարչական, իրենք կարող են ձեռնարկել՝ իրականացնելու համար Լանզարոտեի կոնվենցիայի համապատասխան դրույթները:

---

[2]Նախարարների կոմիտեի CM/Rec(2012)2 Հանձնարարականը անդամ պետություններին 18 տարեկանից ցածր երեխաների և երիտասարդների մասնակցության մասին:

## Ինչպե՞ս պետք է աշխատի Դաշնագիրը գործնականում

Տեղական և տարածաշրջանային ընտրված ներկայացուցիչներին կոչ է արվում իրենց քաղաքներում և տարածաշրջաններում երեխաների առողջության, բարեկեցության և ապահովության համար պատասխանատու իրենց գործընկերների և ստորաբաժինների ուշադրությունը հրավիրել այս դաշնագրի վրա, որպեսզի նրանք կարողանան մասնակցել դաշնագրում առաջարկվող նախաձեռնությունների իրականացման համար տարվող քարոզարշավին:

## Առցանց գրանցման «հենահարթակ» Դաշնագրին միանալու համար

Տեղական և տարածաշրջանային ընտրված ներկայացուցիչները կարող են գրանցվել Կոնգրեսի «դաշնագրի հենահարթակում» ([www.coe.int/congress-pact](www.coe.int/congress-pact)): Այն քաղաքները և տարածաշրջանները, որոնք ցանկանում են իրականացնել այս դաշնագիրը կամ որոնք արդեն իսկ մեկնարկել են որոշակի նախաձեռնություններ, նույնպես հրավիրվում են գրանցվելու:

Այս հենահարթակի միջոցով յուրաքանչյուր ոք հնարավորություն կունենա տեղեկատվություն հաղորդել նոր նախաձեռնությունների և կառույցների, ինչպես նաև արդեն առկա միջոցառումների մասին և

կարող է նորից դիմել հենաիարթակի օգնությանը, երբ իրականացվում են նոր գործողություններ: Այս տեղեկատվությունը թույլ կտա տեղական և տարածաշրջանային մակարդակներում գնահատել ՀԻՆԳԻՑ ՄԵԿԸ քարոզարշավի ընթացքը:

# Տեղական և տարածաշրջանային իշխանությունների գործողությունների ստուգիչ ցուցակ

## Կանխարգելում

- ☐ Տեղադրել հղում Եվրոպայի խորհրդի ՀԻՆԳԻՑ ՄԵԿԸ վեբկայքին՝ քաղաքների և տարածաշրջանների ցանցաէջերում
- ☐ Կազմակերպել տեղեկատվական դասընթացներ մանկապարտեզներում, դպրոցներում և երիտասարդական կենտրոններում երեխաների և անձնակազմի համար
- ☐ Տարածել տեղեկատվություն և ղեկավար սկզբունքներ պարունակող տեղեկագրեր և թռուցիկներ
- ☐ Ապահովել վերապատրաստում տեղական և տարածաշրջանային մասնագետների համար
- ☐ Կազմակերպել քննարկումներ և սեմինարներ մասնագետների և հանրության համար
- ☐ Օգտագործել Եվրոպական տեղական ժողովրդավարության շաբաթը՝ լուսաբանելու համար խնդիրը
- ☐ Համագործակցել ՈԿԿ-ների, լրատվամիջոցների և մասնավոր հատվածի հետ
- ☐ Նշանակել Տեղական/Տարածաշրջանային մակարդակում մի անձ կամ մարմին՝ բարձրացնելու համար երեխաների սեռական բռնության կամ չարաշահման մասին իրազեկվածության աստիճանը

- Աշխատել քաղաքացիական հասարակության հետ՝ հավաքելու համար տեղեկատվություն տեղերում առկա կոնկրետ իրավիճակների մասին տեղեկացնելու համար վարվող քաղաքականության և ձեռնարկվող գործողությունների վերաբերյալ
- Համագործակցել քաղաքի սահմաններից դուրս
- Աջակցել երեխային օգնության հասնող ազգային և եվրոպական թեժ գծերին
- Ստեղծել մեկ կտտոցով կապ քաղաքների և տարածաշրջանների ցանցաէջին՝ արագացնելու համար օգնության և խորհրդատվության տրամադրումը
- Մշակել և տարածել փոքր, կրելու համար հարմար հիշողության քարտեր, որոնք կպարունակեն բոլոր դպրոցականների համար օգտակար հեռախոսահամարներ և հասցեներ
- Արտադրել սառնարանին ամրացվող մագնիսե փոքր ցուցանակներ, որոնք կպարունակեն կարևոր հեռախոսահամարներ յուրաքանչյուր ընտանիքի համար
- Երեխաների կողմից հաճախ այցելվող տարածքներում ցուցադրել պաստառներ, որոնք կպարունակեն տեղեկատվություն այն մասին, թե ուր գնալ օգնություն ստանալու համար
- Հասանելի դարձնել երեխայի նկատմամբ բռնության վերաբերյալ ուսումնական նյութերը դպրոցներում և երիտասարդական կենտրոններում

- ☐ Տարածել տեղեկագրեր և թռուցիկներ՝ համացանցում անվտանգ պահվածք դրսևորելու համար
- ☐ Ավելի դյուրին դարձնել առցանց կատարվող անօրինական գործողությունների մասին տեղեկացնելը

## Պաշտպանություն

- Ստեղծել երեխայի նկատմամբ բարյացակամ բազմաթիվ գործակալություններ ընդգրկող, բազմապրոֆիլ տներ
- Պարտավորություն սահմանել հաշվետվություն տալ տեղական/տարածաշրջանային մակարդակում
- Խթանել երեխաների հետ աշխատող մասնագետների կողմից հաշվետվություններ կազմելու համար նախատեսված ղեկավար սկզբունքների կիրառումը

## Փաստաթղթեր և տեղեկատվական կայքեր

- Եվրոպայի խորհրդի ՀԻՆԳԻՑ ՄԵԿԸ քարոզարշավը երեխաների հանդեպ սեռական բռնությունը դադարեցնելու մասին

- Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա

- Եվրոպայի խորհրդի 2012-2015թթ ռազմավարությունը երեխայի իրավունքների համար

- Եվրոպայի խորհրդի կոնվենցիա մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին

- Կոնվենցիա կիբերհանցագործությունների մասին

- Եվրոպական կոնվենցիա երեխաների իրավունքների իրականացման մասին

- Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի ղեկավար սկզբունքները երեխայի նկատմամբ բարյացակամ արդարադատության մասին

- Հանձնարարական երեխաների և 18 տարեկանից ցածր երիտասարդների մասնակցության մասին

- Բացահայտեք երեխաների իրավունքները

- Ոչ ասենք ծեծին
- Վայրի վեբ անտառ

Համաձայն առկա գնահատումների՝ Եվրոպայում հինգ երեխայից մեկը դառնում է որևէ ձևով կատարվող սեռական բռնության զոհ, ինչպիսին են, օրինակ, արյունապղծությունը, պոռնոգրաֆիան, մարմնավաճառությունը, մարդկանց թրաֆիքինգը, կոռուպցիան, սեռական հարաբերությունների առաջարկությունը համացանցի միջոցով, սեռական շահագործումը կամ սեռական բռնությունը: Խնդրի ծավալները գիտակցելով՝ Եվրոպայի խորհուրդը 2010թ մեկնարկեց ՀԻՆԳԻՑ ՄԵԿԸ քարոզարշավը բարձրացնելու համար յուրաքանչյուրի իրազեկվածության աստիճանը՝ երեխաների, ծնողների և նրանց, ովքեր շփվում են երեխաների հետ և աջակցելու Եվրոպայի խորհրդի 47 անդամ և այլ պետությունների կողմից Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին կոնվենցիայի վավերացմանը և իրականացմանը, որը հայտնի է նաև որպես Լանզարոտեի կոնվենցիա:

Տեղական և տարածաշրջանային իշխանությունները, ազգային կառավարությունների հետ համատեղ, կրում են քաղաքացիների մարդու իրավունքների իրականացման և պաշտպանության հիմնական պատասխանատվությունը, որը ներառում է իրենց տարածքում բնակվող երեխաների և երիտասարդների անվտանգության և բարեկեցության ապահովումն ու խթանումը: Սեռական բռնության և սեռական չարաշահման զոհերին օգնելու համար անհրաժեշտ ծառայությունները հիմնականում տրամադրվում են տեղական մակարդակում: Սա նաև այն մակարդակն է, որտեղ կանխարգելիչ և իրազեկվածությունը բարձրացնող միջոցառումները կարող են ամենաարդյունավետը լինել: Հետևաբար, երեխաների հանդեպ սեռական բռնությունը դադարեցնելու պայքարի առաջնային գծում գտնվում են տեղական և տարածաշրջանային իշխանությունները և հենց նրանք էլ պետք է զարգացնեն և իրականացնեն գործողության պլանները և ռազմավարությունները՝ դրանցով զբաղվելու և հետագա դեպքերը կանխելու համար:

Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսը մշակել է Երեխաների հանդեպ սեռական բռնության դադարեցման քաղաքների և տարածաշրջանների այս դաշնագիրը՝ ուղղորդելու համար իշխանությունների գործողությունները սեռական շահագործման և բռնության դեմ մղվող պայքարում: Այն ներառում է տեղական և տարածաշրջանային մակարդակում իրականացվելիք գործնական նախաձեռնությունների և քաղաքական միջոցառումների մի ցանկ՝ ստեղծելու համար երեխայի հանդեպ բարյացակամ ծառայություններ, պաշտպանելու երեխաներին և օգնելու կանխել սեռական բռնությունը համայնքի շրջանակներում:

PREMS 17214

congress.oneinfive@coe.int – www.coe.int/congress-oneinfive

ARM

www.coe.int

Եվրոպայի խորհուրդը, որը որպես քաղաքական կազմակերպություն հիմնվել է 1949 թվականին, աշխատում է աջակցել ժողովրդավարությանը և մարդու իրավունքներին ամբողջ մայրցամաքում: Այն նաև մշակում է համընդհանուր պատասխաններ իր 47 անդամ պետություններում առկա սոցիալական, մշակութային և իրավական մարտահրավերներին: Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսը ներկայացնում է տեղական և տարածաշրջանային իշխանությունները և խթանում ժողովրդավարությունը բնակչության լայն զանգվածներում: Այն ունի երկու պալատ՝ Տեղական իշխանությունների պալատ և Տարածաշրջանների պալատ և համախմբում է 318 լիիրավ և 318 փոխարինող անդամների, որոնք ներկայացնում են ավելի քան 200 000 եվրոպական տարածքային համայնքներ:

The Congress
Le Congrès

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE